**Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Արմանիսի հիմնական դպրոց» ՊՈԱԿ – ի դասվարի (20դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ի նմասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալտ եղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 26.01.**2026թ**. –ից մինչև **10.02.2026թ**–ը ներառյալ, ամենօր՝ժամը10:00-ից15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչաշխատանքային այլօրերից:

**Մրցույթը տեղի կունենա 2026թ Փետրվարի13-ին՝ժամը**12:00-**ին, Արմանիսի հիմնական դպրոցում, հասցե՝** Լոռու մարզ, Ստեփանավան համայնք գ. Արմանիս 2 – րդ փողոց, 13 շենք:
Տեղեկություններիհամարզանգահարել(093)2333 78 հեռախոսահամարով: